



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

05 օգոստոսի 2022 թվականի թիվ 109-Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 04-Ի ԹԻՎ 96-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՍ ԲԵՐՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի Հանձնաժողովը (այսուհետ՝ *Հանձնաժողով*), ուսումնասիրելով «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերության կողմից 2022 թվականի հուլիսի 14-ին Հանձնաժողով մուտքագրված վարչական բողոքը, *պարզեց*.

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ *Հեռարձակող կամ Բողոքաբեր*) վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 04-ին ««ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին» թիվ 96-Ա որոշման (այսուհետ՝ *Որոշում կամ Վարչական ակտ*) դեմ:

Հանձնաժողով ներկայացված վարչական բողոքում Հեռարձակողը նշել է՝

«Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը 04 հուլիսի 2022 թվականին օրենքի խախտմամբ ընդունել է առ ոչինչ վարչական ակտ, որը պարունակում է կոպիտ սխալներ:»:

Սույն վարչական բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու նպատակով՝ Հանձնաժողովը առաջին հերթին հարկ է համարում անդրադառնալ, թե ե՞րբ է վարչական ակտը **համարվում առ ոչինչ**:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ *ՎՀՎՎ օրենք*) **62-րդ հոդվածի 1-ին մասը** սահմանում է.

«Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել.

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը.

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում.

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:»:

Հանձնաժողովը Որոշմամբ արձանագրել էր, որ Հեռարձակողը խախտել էր «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ *Օրենք*) և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի հետևյալ պահանջները:

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է՝ Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է սույն օրենքի և «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասը սահմանում է՝

«Արգելվում է վիճակախաղի գովազդումը լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո»:

Համաձայն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ մասի՝ ինտերնետ շահումով խաղերի գովազդի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածով վիճակախաղի գովազդի համար սահմանված պահանջներն ու սահմանափակումները:

Հիմք ընդունելով վերոնշյալ կարգավորումները պարզ է դառնում, որ.

1) *Հանձնաժողովի Որոշումից հստակ երևում է և միանշանակ պարզ է, թե ինչ վարչական մարմինն է ընդունել այն:*

Այսպես, Որոշման տիտղոսաթերթին հստակ արձանագրված է վարչական մարմնի անվանումը, որն ընդունել է վիճարկվող վարչական ակտը: Վարչական մարմնի անվանումն է՝ **Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով:**

2) *Հանձնաժողովը՝ որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն իրավասու էր կայացնել բողոքարկվող Որոշումը:*

Այսպես, Որոշումում վկայակոչված նորմերը գալիս են ապացուցելու, որ Հանձնաժողովին վերապահված էր ընդունելու բողոքարկվող Որոշումը:

3) *Որոշումից հստակ երևում է, թե կոնկրետ ում է հասցեագրված վարչական ակտը, ինչպես նաև հստակ արձանագրված է, թե ինչ է այն կարգավորում:*

Որոշումից հստակ երևում է, որ վարչական ակտի հասցեատերը **«Ռադիո Հայ» ՍՊ ընկերությունն է**, իսկ Որոշումը կարգավորում է տեսալսողական մեդիայի ոլորտը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

4) *Որոշմամբ Հեռարձակողի վրա չի դրվել ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն կամ չի տրվել ոչ իրավաչափ իրավունք:*

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Հանձնաժողովն իրականացրել է իր լիազորությունները տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորելու նպատակով: Ըստ կազմված Արձանագրության, Հեռարձակողը կատարել էր «Գովազդի մասին» օրենքի պահանջների խախտում, որը համարվում է տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության բաղկացուցիչ մաս: Ստացվում է, Հանձնաժողովը Օրենքով նախատեսված կարգով կատարել է իր պարտականությունները՝ վարչական պատասխանատվության ենթարկելով Հեռարձակողին:

Վերոգրյալից հետևում է, որ Որոշումը չի բավարարում ՎՀՎՎ օրենքով ամրագրված **առ ոչինչ համարվելու** օրենսդրական պայմաններին:

Հեռարձակողն իր բողոքում մասնավորապես արձանագրել է.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-մասի համաձայն, վարչական վարույթի առավելագույն ժամկետը՝ 30 օրն է: Վարույթը հարուցվել է 03 մայիսի 2022 թվականին, ուստի 02 հունիսի 2022 թվականին Հանձնաժողովը պարտավոր էր կամ ընդունել վարչական ակտ, կամ որոշում վարույթը 10 օրով հետաձգելու մասին»:

Սույն պնդման վերաբերյալ Հանձնաժողովը կատարում է հետևյալ արձանագրումը. **ՎՀՎՎ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության** համաձայն՝ *«Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ»:* Հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով Օրենսդիրն ընդունել է տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող հատուկ օրենք՝ «Տեսալսողական

մեղիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Օրենքի **57-րդ հոդվածի 1-ին մասը** սահմանում է.

«Սույն հոդվածով սահմանված իրավախախտումներ կատարած անձի նկատմամբ տուգանք կարող է կիրառվել իրավախախտում կատարելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող կամ տևող իրավախախտման դեպքում՝ այն հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:»:

Ինչպես տեսնում ենք վկայակոչված դրույթից՝ հատուկ օրենքը նախատեսել է ավելի երկար ժամկետ, այն է՝ **ոչ ուշ քան երկու ամիս:**

Հեռարձակողն իր բողոքում կատարել է ժամկետների ոչ ճիշտ հաշվարկ, որի արդյունքում սխալ եզրահանգում է կատարել: Ժամկետները հաշվարկվում են իրավախտման վերաբերյալ կազմված արձանագրության պահից: Հեռարձակողի կողմից կատարված իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է 03 մայիսի 2022 թվականին, ուստի պատասխանատվության ենթարկման վերջնաժամկետ 03 հուլիսի 2022 թվականին, ոչ աշխատանքային օր հանդիսացող կիրակի օրը: Հիմք ընդունելով ՎՀՎՎ օրենքի **46-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությամբ՝** *«Եթե ժամկետը լրանում է ոչ աշխատանքային օրը, ապա ժամկետն ավարտված է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 18:00-ին:»* Հանձնաժողովը Հեռարձակողի նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին որոշումն ընդունել է հուլիսի 03-ին հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ **04 հուլիսի 2022 թվականին:** Անհիմն է, Բողոքաբերի այն եզրահանգումը, որ *«Հանձնաժողովի կողմից տուգանք կիրառելու համար օրենքով սահմանված ժամկետը լրացել է 2022 թ. հունիսի 28-ին:»:* Օրենսդրության համապարփակ վերլուծության արդյունքում հստակ է դառնում, որ Հանձնաժողովը որոշումը կայացրել է Օրենքով նախատեսված ժամկետներում:

Հաջորդիվ, Հեռարձակողը բողոքում կատարել է հետևյալ պնդումը.

«(...) Բացի այդ գովազդի մասին օրենքի 25-րդ հոդվածի համաձայն Հանձնաժողովը իրավասու էր «Ռադիո Հայ» ՄՊ ընկերությանն ուղղարկել գովազդի մասին օրենսդրության խախտման, դադարեցման մասին ծանուցագիր իսկ նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն իրավասու էր կիրառել Ընկերության նկատմամբ տուգանք օրենսդրության խախտման մասին իր ծանուցագրի պահանջները կատարելուց խուսափելու կամ ժամանակին չկատարելու համար:»:

Սույն պնդման կապակցությամբ Հանձնաժողովը հայտնում է, որ վկայակոչված նորմի պահանջները կիրառելի չեն բողոքի առարկա հանդիսացող իրավահարաբերությունների համար, քանի որ Օրենքը հստակ նախատեսել է իրավախախտում, ինչպես նաև կատարած իրավախախտման համար նախատեսվող վարչական տույժ: Բողոքաբերի կողմից վկայակաչված նորմերը կիրառելի կլինեին այն պարագայում, երբ իրավահարաբերությունները հատուկ օրենքով չունենային հստակ կարգավորում:

Հեռարձակողն իր բողոքի 1-ին կետում անդրադարձել է հետևյալ խնդրին.

«Որոշման մեջ սխալ է նշված դրա ընդունման տարեթիվը՝ 04 հուլիսի 2022 թվականի փոխարեն նշված է 04 հուլիսի 2021 թվական:»:

Սույն խնդրի վերաբերյալ Հանձնաժողովն արձանագրում է, որ Բողոքաբերի մատնանշած սխալը տեղ է գտել Հանձնաժողովի կողմից կայացրած գրավոր վարչական ակտում: ՎՀՎՎ օրենքի **55-րդ հոդվածի 4-րդ մասի գ) կետը** սահմանում է այն, որ վարչական ակտը, ի թիվս այլնի, պետք է պարունակի *«ակտի լրիվ անվանումը, դրա ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը:»:* Ինչպես իրավացիորեն նշել է Բողոքաբերը Որոշման մեջ տեղ է գտել գրավոր վարչական ակտին տրվող պահանջների խախտում: Սակայն, Հանձնաժողովը ցանկանում է արձանագրել, որ տեղի է ունեցել պարզապես տեխնիկական վրիպակ, որը արտացոլված է եղել բացառապես Որոշման տիտղոսաթերթի վրա, իսկ

Որոշումը ընդունելուց հետո Հանձնաժողովի նախագահի կողմից ստորագրվել է ճիշտ վավերապայմանների առկայությամբ:

Հաշվի առնելով վարչական բողոքը՝ Հանձնաժողովը սույն որոշմամբ պետք է պատասխանի խիստ կարևոր հարցի. «Արդյո՞ք Հանձնաժողովի կայացրած որոշումն անվավեր վարչական ակտ, թե ոչ»:

Ուսումնասիրելով և՛ վարչական բողոքը, և՛ Որոշումը, Հանձնաժողովը ցանկանում է արձանագրել հետևյալը.

Հանձնաժողովը սույն որոշման սկզբում տվել էր մեկնաբանություն այն մասին, որ իր Որոշումը որևէ կերպ չի կարող հանդիսանալ **առ ոչինչ վարչական ակտ**, այդ իսկ պատճառով Հանձնաժողովը քննարկում է Որոշման **անվավերության հարցը**:

ՎՀՎՎ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն.

«(Անվավեր է առ ոչինչ չհամարվող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է)՝ օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Բողոքաբերը իր 17 մայիսի 2022 թվականի N 05/17 գրությամբ մասնավորապես արձանագրել էր.

«(...) Հարկ ենք համարում նշել նաև, որ գրությանը կից ուղղարկված 3 մայիսի 2022 թ. կազմված Արձանագրությունն իրականությանը չի համապատասխանում: Մասնավորապես «Կարարկո» ՍՊ ընկերության («Adjarabet.am») կողմից գովազդվող «Սլոթ Օսպին» և «Դիջիթեյն» ՍՊ ընկերության («Toto Gaming.am») կողմից գովազդվող «Քեշ-քեշ շահումներ», «Բլոտ կոմբատ» ինտերնետ շահումով խաղերը չեն հանդիսանում վիճակախաղ: (...)»:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Բողոքաբերի կողմից ներկայացված նշված ինտերնետային շահումով խաղեր մատուցող կազմակերպությունների պարզաբանումները, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրված լիցենզիաները, ինչպես Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության 03.05.2022 թվականին կազմած արձանագրությունը, գտնում է՝

1) Հանձնաժողովն ի դեմս Ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության, իրավամբ արձանագրել է «Գովազդի մասին» օրենքի **15-րդ հոդվածի 13-րդ մասի** պահանջի խախտում, այն է՝ *«արգելվում է վիճակախաղի գովազդումը լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո»:*

2) Հիմք ընդունելով Հանձնաժողովի Ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության մշտադիտարկման արդյունքում արձանագրված տեսահոլովակները, ինչպես նաև «Կարարկո» ՍՊ ընկերության¹ և «Դիջիթեյն» ՍՊ ընկերության² կողմից ներկայացված պարզաբանումները՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ վերջիններս գովազդել են ինտերնետ շահումով խաղերը, որոնք չեն հանդիսանում վիճակախաղ:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված լրացուցիչ ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Հանձնաժողովը, ղեկավարվելով ՎՀՎՎ օրենքի **30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով**, 2022 թվականի մայիսի 03-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել էր թիվ 15 վարչական վարույթը: Վարչական վարույթը հարուցվել էր լսողական մեդիա ծառայություն մատուցող

¹<https://www.e-license.am/am/license?license.lid=7737>

²<https://www.e-license.am/am/license?license.lid=15752>

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերության կողմից «Գովազդի մասին» օրենքի **15-րդ հոդվածի 13-րդ մասի** պահանջները խախտելու հիմքով:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Բողոքաբերի ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի կայացրած Որոշման, ինչպես նաև Հանձնաժողովի Ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կազմած Արձանագրության հետ և պարզվել է, որ Հեռարձակողի կողմից իր վիճարկող հարցի շրջանակներում տեսալսողական մեդիա ծառայության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջների խախտում չի եղել:

Ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ չի խախտվել Օրենքի **57-րդ հոդվածի 16-ին մասով** և «Գովազդի մասին» օրենքի **15-րդ հոդվածի 13-րդ մասով** սահմանված պահանջները և Հեռարձակողի կողմից թույլ չի տրվել իրավախախտում:

Հանձնաժողովը՝ որպես վարչական մարմին, վարչարարությունն իրականացրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ապահովել է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա հանգամանքները («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի **37-րդ հոդված**):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովն իր վարչական ակտը կայացրել էր **օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով**՝ Հանձնաժողովը գտնում է, որ իր կողմից ընդունված վարչական ակտը առ ոչինչ չհամարվող ոչ իրավաչափ վարչական ակտ է:

Այսպիսով, վարչական բողոքի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում՝ առաջնորդվելով ինչպես գործում առկա փաստերով, Հանձնաժողովն ամրագրում է, որ Հանձնաժողովը՝ որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացրել է ոչ իրավաչափ:

Ամփոփելով, Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված ժամկետում իրականացված վարչարարության արդյունքում 2022 թվականի հուլիսի 04-ին ընդունված թիվ 96-Ա վարչական ակտն առ ոչինչ չհամարվող ոչ իրավաչափ վարչական ակտ է: Հետևաբար, Հանձնաժողովի կողմից ընդունված առ ոչինչ չհամադրվող ոչ իրավաչափ վարչական ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի **63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով** սահմանված հիմքով պետք է ճանաչել **անվավեր**:

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի **63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը**՝ *«անվավեր է առ ոչինչ չհամարվող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով»*,

63-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ նախադասությունները՝ *«Որպես կանոն, վարչական ակտն անվավեր է ճանաչվում ամբողջությամբ: Վարչական ակտը մի մասով անվավեր կարող է ճանաչվել, եթե անվավեր չճանաչված մասը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի:»*,

76-րդ հոդվածի ա) կետի 1-ին նախադասությունը՝ *«բավարարել բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն և ընդունել նոր վարչական ակտ»*՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Բավարարել «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՓԲ ընկերության կողմից Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 04-ի թիվ 96-Ա որոշման դեմ բերված վարչական բողոքը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 04-ի «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին» թիվ 96-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ այն «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

05 օգոստոսի 2022թ.
ք. Երևան